ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ, ԻՐԱՎՈՒՆՔԻ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

«Հանրային կառավարում» մասնագիտության համար

Մասնագիտություն/ուղղություն ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Որակավորումը Հանրային կառավարման մագիստրատորոս

Ֆակուլտետ Հասարակական գիտությունների

Ուսուցման ձև առկա

առկա - 2-րդ կիսամյակ - 2 շաբաթ (3 կրեդիտ)

Հաստատված է ամբիոնի նիստում

(արձ. թիվ 7. 25.01. 2024 թ.)

Ամբիոնի վարիչ՝ Վ. Հարությունյան

Հաստատված է Հասարակական գիտությունների ֆակուլտետի

գիտական խորհրդի նիստում

(արձ. N 9. 25.01. 2024 թ.)

Հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկան՝ Հ. Դապոյան

Կազմող՝ Ն. Բարսեղյան

Վանաձոր 2024 թ.

« ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» մասնագիտության

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Մասնագիտական պրակտիկայի ընդհանուր բնութագիրը

«Հանրային կառավարում» մասնագիտության մագիստրանտների մասնագիտական պրակտիկան կազմակերպվում և իրականացվում է բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշչին և մագիստրանտների մասնագիտական պրակտիկայի կանոնակարգին համապատասխան՝ պահպանելով կրթական գործընթացի անընդհատության, հաջորդայնության և շարունակականության սկզբունքը:

«Հանրային կառավարում» մագիստրատուրա կրթական ծրագրում մասնագիտական պրակտիկան կազմում է ուսումնական գործընթացի և կրթական ծրագրի կարևոր բաղկացուցիչ մասը, որը միտված է մագիստրանտներին նախապատրաստել գիտական, գիտահետազոտական, արտադրական գործընթացներում մասնակցության և համապատասխան գործառնական ներգրավվածություն ապահովելու համար:

Մասնագիտական պրակտիկայի նպատակը և առաջադրված խնդիրները

Մասնագիտական պրակտիկայի նպատակը մագիստրանտների մասնագիտական հմտությունների զարգացումն է, մասնագիտական և կազմակերպչական կարողությունների ձեռքբերումը, ինչպես նաև ուսումնական նախագծերի, ինքնուրույն հետազոտական աշխատանքների համար ուսումնական ռեսուրսների հավաքագրումն ու արդյունքների ընդհանրացումը:

«Հանրային կառավարում» մագիստրատուրա կրթական ծրագրում մասնագիտական պրակտիկայի ընթացքում առաջադրվում են մի շարք հրատապ լուծումներ պահանջող խնդիրներ.

- գործնական աշխատանքների միջոցով զարգացնել ուսանողների մասնագիտական հմտությունները, փորձառությունը և մասնագիտական բնագավառում ինքնուրույն աշխատելու կարողությունները,
- ուսումնական գործընթացում ամրապնդել «Հանրային կառավարում» կրթական ծրագրում ներառված գիտական տարբեր ուղղություններում մագիստրանտների ստացած տեսական գիտելիքների գործնական կիրառումը, ընդհանրական, մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերումը,
- ընձեռել լայն հնարավորություններ «Հանրային կառավարում» մագիստրատուրա կրթական ծրագրում ընդգրկված մագիստրանտներին մասնագիտական կարողությունների ձեռքբերման, մասնագիտական կողմնորոշման, ինքնարտահայտման և հետազայում, որպես աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխանող աշխատուժ հանդես գալու համար:

Մասնագիտական պրակտիկայի կազմակերպման կարգը

Մասնագիտական պրակտիկան կազմակերպվում է ՎՊՀ-ի և կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա, որոնցում ամրագրվում են կողմերի իրավունքներն ու փոխադարձ պարտականությունները:

Պրակտիկայի ղեկավարումն իրականացվում է ՎՊՀ-ի համապատասխան ֆակուլտետի, մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ամբիոնի և պրակտիկայի բազայի կողմից նշանակված համապատասխան մասնագետների միջոցով:

Պրակտիկայի կազմակերպման ուղղությամբ համալսարանը համագործակցում է Լոռու մարզի մարզպետարանի, Վանաձորի համայնքապետարանի, մի շարք ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների հետ:

Մասնագիտական պրակտիկան, որպես կանոն, կազմակերպվում է համապատասխան գործունեություն իրականացնող կամ հարակից ոլորտի պետական, տեղական ինքնակառավարման հաստատություններում, կոմերցիոն և ոչ

կոմերցիոն կազմակերպություններում և միտված է զարգացնելու մագիստրանտների՝ մասնագիտական գործունեություն իրականացնելու կարողությունները:

Մասնագիտական պրակտիկայի ընթացքում մագիստրանտներն իրականացնում են մասնագիտական գործունեություն, ունենում խորհրդատու մասնագետներ՝ տնտեսագետ, հանրային կառավարման մասնագետ և մեթոդիստ, սովորում են հաղթահարել հանրային կառավարման կոնֆլիկտային իրավիճակները, վերհանել հանրային կառավարման ոլորտում առկա դժվարությունները, հանդես գալ իրավիճակային վերլուծության արդյունքներով, ներկայացնել իրավիճակի գնահատման սեփական ցուցանիշները, հանդես գալ իրավիճակի հաղթահարման սեփական առաջարկներով:

Մասնագիտական պրակտիկայի անցկացման կարգը

Մագիստրանտների մասնագիտական պրակտիկան մագիստրանտների կրթական ծրագրի պարտադիր մասն է և իրականացվում է կոնկրետ մասնագիտական գործունեության ոլորտներում՝ պրակտիկայի հիմնարկի և համալսարանի կողմից նշանակված ղեկավարների հսկողությամբ և անմիջական աջակցությամբ:

Պրակտիկայի ընթացքում կիրառում են մագիստրանտների անհատական թղթապանակներ, որոնցում ամփոփվում են նրանց անհատական և թիմային աշխատանքի, մագիստրոսական թեզի շրջանակներում իրականացվող իրավիճակային վերլուծության և գործունեության ինքնավերլուծության արդյունքները:

Պրակտիկայի անցկացման ժամկետները

Պրակտիկայի անցկացման ժամկետները սահմանվում են ՎՊՀ-ի հասարակական գիտությունների ֆակուլտետի կողմից բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշչի և պրակտիկայի առարկայական նկարագրի (ծրագրի) հիման վրա՝ հաշվի առնելով մագիստրանտների տեսական պատրաստվածությունը և պրակտիկայի բազայի տեխնիկական հնարավորությունները:

Մասնագիտական պրակտիկան կազմակերպվում է մագիստրատուրայի ավարտական կուրսում:

Մասնագիտական պրակտիկայի արդյունքների պաշտպանության կարգը

Համալսարանում ներդրվել է մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների պրակտիկայի արդյունքների պաշտպանության ընթացակարգ, որի համաձայն, պրակտիկայի յուրաքանչյուր շրջափուլի ավարտին մագիստրանտները պաշտպանում են իրենց պրակտիկայի արդյունքները և գնահատվում համալսարանի կողմից նշանակված հանձնաժողովի կողմից: Պրակտիկայի միջին գնահատականն այնուհետև ներառվում է սովորողի ամփոփիչ ատեստավորման գնահատականում:

Մագիստրոսական պրակտիկաների ամփոփման նպատակով համալսարանում կազմակերպվում են մասնագիտական պրակտիկայի սեմինարներ: